Տիրույթ	
Որակի տիրույթ	Իրավական գործեր
Կապ որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱԵՉՈՒ չափանիշներ: 3.2, 3.3, 3.6,
Գործողության տարիներ	2021-2025
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	05
Տիրույթի պատասխանատու	Իրավաբան
Ռազմավարական նպատակները	
Ապահովել կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչություն	
Թիրախները	
1. Տեղական և միջազգային օրենսդարական կարգավորումների ուսումնասիրությունների և թեմատիկ վերլուծությունների արդյունքում գործող իրավակարգավորումների համահնչեցում ՀՀ օրենսդրությանը և միջազգային պահանջներին: 2. Ապահովել հիմանական դերակատարում ՀՀ Որակի ապահովման շրջանակի մշակման և իրականացման մեջ՝ համահունչ լինելով գործող և մշակվող իրավակարգավորումներին:	
Գնահատման ցուցիչներ	
1. Լիազոր մարմին ներկայացված առաջարկություններ Կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ: 2. Մշակված և հաստատված քաղաքականություններ, ընթացակարգեր, կանոնակարգեր: 3. Թեմատիկ վերլուծություններ՝ մշակումների և հաջողության ցուցանիշների վերաբերյալ:	
Հիմնական գործողությունների նկարագրությունը	
1. Պատրաստել առաջարկությունների փաթեթ կրթության ոլորտը կարգավորող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ, նոր մշակվող իրավական ակտերի աշխատանքներին մասնակցություն (մասնավորապես՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենք, Բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգ, Նախնական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագերի պետական հավատարմագրման կարգ, Հավատարմագրման պետական չափանիշներ, Փորձաքննությունների անցկացման ձեռնարկներ): 2. ՈԱԱԿ նոր խմբագրության կանոնադրության և դրանից բխող ներքին իրավական ակտերի մշակում և հաստատման ներկայացում: 3. Լիազորագրով ներկայացնել ՈԱԱԿ-ը երրորդ անձանց հետ հարաբերություններում, ՈԱԱԿ-ի անունից պատրաստել տարաբնույթ պայմանագրեր՝ ապահովելով ՈԱԱԿ-ի գործունեության իրավական կողմը: 4. Իրավական ակտերի մշակման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում թեմատիկ վերլուծությունների կազմում:	
Գնահատումը	
1. Շահակիցների և աշխատակազմի հետ հանդիպումների արձանագրություններ 2. Իրավական ակտերի քննարկումներ աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների հետ, հետադարձ կապի արդյունքներ 3. Խորհրդատվությունների վերաբերյալ անցկացված հարցումների արդյունքներ:	
Պատասխանատվությունը	
Իրավաբան	
Հաշվետվությունը	

1. Տարեկան հաշվետվություն և թեմատիկ վերլուծություն
Բարելավումը
Հաշվի առնելով ներքին և արտաքին գնահատման արդյունքները՝ դրանք անընդհատ ներառվում են գործընթացների բարելավման և զարգացման մեջ:
Կարգավորող փաստաթղթերը
Ներքին 1. ՈԱԱԿ-ի կանոնադրություն 2. ՈԱԱԿ էթիկայի և վարքագծի կանոններ 3. ՈԱԱԿ ներքին կարգապահական կանոններ 4. ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն և ընթացակարգ 5. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ 6. ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ 7. Հավատարմագրման կարգից բխող ներքին կանոնակարգեր, ձևաչափեր: ***Արտաքին*** 1. Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգ 2. Հավատարմագրման պետական չափանիշներ 3. ՀՀ օրենքները «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» 4. «Հինադրամների մասին» ՀՀ օրենք:

Հաստատված՝
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան
18.10.2021թ.